

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՅՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ—«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐՈՆՈՅ». ՀՍՍՌ Ժողովուս-
վետից կից Պետական Ձեռագրատուն (Մատենադարան). աշխատություններ և
առաջաբանով պատմական գիտությունների քեկնածու Աշ. Աբրահամյանի:
Մասնագիտական խմբագիր Ե. Տեր-Մինասյան. Երևան, 1941 թ., XXX + 31
(*)—300, գինը 15 ուրլի:

Հովհան Մամիկոնյանի «Պատմություն Տարոնոյ» աշխատության հա-
մեմատական բնագրի հրատարակությամբ ՀՍՍՌ-ի Ժողովուսովետի կից
Պետական Մատենադարանը կատարել է գովասանքի արժանի մի քայլ՝
ընթերցող լայն հասարակությանը տրամադրելով վաղուց ի վեր հրապա-
րակիտ սպառված և մեր մատենագրության պատմության մեջ իր հայրե-
նասիրական վեհ գաղափարներով ու օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի
մղած պայքարի հերոսական զրվագների նկարագրությամբ ևղակի տեղ
բռնող մի սկզբնաղբյուր: Սակայն այս հրատարակության նշանակությունը
չի սպառնում վերոհիշյալով. մեր օր-ավուր բարգավաճող պատմագրության
հետագա զարգացման համար շահագանց կարևոր է հայ մատենագրության
ինչպես անտիպ, այնպես էլ հնում ոչ-գիտական մեթոդներով հրատարակ-
ված երկերի համեմատական բնագրերի հրատարակման գործը: Արդ, այս
հրատարակությամբ Մատենադարանի ղերեկցիան սկիզբ է դնում իր ֆուն-
դում գտնվող հարուստ գրչագրերի համեմատությամբ մի շարք պատմա-
գրական և գիտական բնագրերի հրատարակմանը:

Բնագիրը հրատարակության պատրաստել է պատմական գիտություն-
ների թեկնածու (այժմ՝ դոկտոր) Աշոտ Աբրահամյանը, որ համեմատելով
Մատենադարանում իրեն հայտնի 23 գրչագրերը, որոնք պահպանել են
Հովհան Մամիկոնյանի աշխատության բնագիրը, ընտրել է նրանցից վեց
լավագույն գրչագրեր ու նրանց բաղդատման միջոցով (օգտագործելով նաև
4. Պոլսի և Վենետիկի հրատարակությունները) կազմել է համահավաք բնագիր:

Որևէ երկի համեմատական բնագրի հաճող հրատարակման նախապայ-
մանը տարբեր գրչագրերից բաղդատման միջոցով ստացված լավագույն
տարբերակների ճիշտ ընտրությունն է հրատարակչի կողմից և
այն բնագրի մեջ մտցնելու կարողությունը: Առանց վերոհիշյալ պայմանի,
խոսք անգամ չի կարող լինել որևէ երկի գիտական համեմատական բնագիր
կազմելու մասին: Սակայն գրախոսվող բնագրի հրատարակչը, հավանաբար
իր աշխատանքը ղյուրացնելու միջոցով, որպես բաղդատական բնագիր
ներկայացրել է հրատարակության համար հիմք ծառայած № 1328 գրչագրի
սովորական արտատպությունը, այլ գրչագրերի տարբերակները, որպես
հավելված, տեղավորելով տողատակի ծանոթագրությունների բաժնում:

Ղեկավարվելով վերոհիշյալ տարրինակ սկզբունքով¹, հրատարակիչը չի օգտվել հիմք հանդիսացող գրչագրի բնագիրը բազմաթիվ անխուսափելի աղավաղումներից ու թերություններից մաքրելու լայն հնարավորությունից և, հակառակ իր հավաստիացման, նորանոր ու բազմապիսի աղավաղումներով ավելացրել է նախորդ հրատարակություններում տեղ գտած թերությունները:

Մեր հոգվածի բնույթը թույլ չի տալիս մեզ ցույց տալ բնագրի բոլոր աղճատումներն ու թերությունները, սակայն կանխելու նպատակով առաջիկայում հրատարակվելիք այլ երկերի բնագրերում նման տիպի թերությունների հնարավոր գոյությունը, ինչպես և որոշ նախադասություններ աղավաղումներից ազատելու նպատակով մենք թույլ ենք տալիս մեզ, մեր թեզի ապացուցման համար, բերել թերևս անհրաժեշտից ավելի թվով օրինակներ:

Նախ նշում ենք բնագրում տեղ գտած քերականական ու շարահյուսական սխալ ձևերը, աղճատված և կամ բովանդակությունը չհամապատասխանող այն բառերն ու դարձվածքները, որոնք հեշտությամբ ուղղվում են հրատարակչի կողմից արհամարհված մյուս գրչագրերի համապատասխան հատվածների միջոցով:

Թևագրում ապագրված է	Ընթացի գրչագրերի պես է ուղղել
Խրատարակչի ղեկավարող ղադրիկի լինելու եկեղեցույ ղարդս (էջ 48, աղ 6)	Խրատարակչի ղեկավարող... (գրչագրեր ՎՂԳ?)
Իսկ ղ Տ ի մ ո թ է ո ս լուսյ թ է գնաց... (44. 7)	Իսկ ղ Տ ի մ ո թ է ո ս է լուսյ թ է գնաց... (ՄԳ)
Ձի գեռ մանկունք երկրիս ի դպրոցի են... (48. 11)	... ի դպրոցս են (Լ)
...գառալ կիրի բնակութիւն կոոցն, սկիզբն արար եկեղեցույ (100. 3-4)	... ի տան է կոոցն... (Լ)
գի աւանք էին սոթա (կուտոս, Մեղաի, Բրեխ են) բազումք... (111. 7)	գի աւանք էին սոթա մեծամեծք (ՎՍԼ)
...եկն այր մի ե պատմեաց, եթէ արք հիւսիսոյ գան ի վերայ (113. 3-4)	... գան ի վերայ մեր (ՆՎՄ)
...ազն լուսոյ գնէր ի նոյն տապանին (115.2)	... գանն լուսուր... (ՎԼ)

¹ Հրատարակիչը հնարավոր է համարել, մի երկու տեղ շեղվելով իր սկզբունքից, ուղղել բնագիրը համաձայն այլ գրչագրերի ընթացվածքների: Այդպիսի ուղղումների թվին է պատկանում էջ 84.6-ի «գլխադիկն բերին ի տեղի անցուցին» համաձայն, որի դիմաց Մ 1328 գրչագրի ունեցել է «... ի Մեղաի անցուցին» ձևը: Թերևս Մ 1328-ի այս ընթացվածքի պահպանումը հեղանակի սկզբունքի արդարացման միակ զեպքը լինելու Տեղին չէ նաև հիմք հանդիսացող գրչագրի հասկանալի ու հարթ «և ոչ մի բան թագոյց [Վանան] ի նման է ի Միհրանայ» ձևի փոխարինումը «և մի բան ոչ թագուցեալ ի նման է» ձևով (էջ 190 3-4):

² Օգտագործում ենք հրատարակչի համառոտագրությունները՝ Լ = Մ 1886 գրչագիր, Բ = Մ 1912 գրչ., Ն = Մ 2618 գրչ., Մ = 1772 գրչ., Ս = 7898 գրչ., Վ = վենետիկյան հրատարակություն (1832 թ.), Պ = Կ. Պոլսի հրատարակություն (1722 թ.):

... լուսնի դձայն սաղմոսերգութեան նոցա, զի գային յանասունն (120. 6-7)

... հանդերձ քահանայիւք եւ անուշանու խնկաւք (122. 8)

Բայց ի պատերազմէն արդեւեալ թագաւորն ասելով (128. 3)

... վասն ունեւոյ զքեզ եկեալ է Յ և ԸՌ. եւ հրամայեաց զաւրացն... (129. 8)

... ի ջոցին ի հարաւակողմն անասուն (131. 6)

զոր տեսեալ ԴՌ արանցն, որ ի վերայ գեղջն էին (131. 10)

... ասպ թէ ոչ՝ քանզեւ զերկերդ քսորով և գերութեամբ (133. 8-9)

... աստղի սրբոյ սեղանսն [մանկանն] երկրպագեցոցին տեսնե բերին հտուն ցնա (150. 5)

ոչ ես զքեզ ծնայ և սնուցի և զու գիտ միայն թողեր (151. 3)

... որ խոսանաբարկքն էին ի վանսն (155. 4)

... զեւթն եկեանն սպանին (175. 1)

... կալեալ զեկել և արմնն էին (187. 9)

... երկու ոմանց (188. 1)

... այդ գերեզման ձեզ եղիցի շնորհն իմ զարսից արքայի (195. 7)

... միթէ որդիս խնդրես յերանաց մերոց (209. 5)

Յիրաւի է այդ անունն իմ (214. 11)

Իսկ նա գաւգն ձգեալ (228. 4)

... զու քրիստոսնայ յեր... ե իւր եանք ընդ քեզ (238. 4)

... զքաջ արծիւ (241. 6)

... կաշի ասպարէ (250. 4)

... էր սա զասակաց յայլնց բանակացն (250. 10)

... ջորով ամենեւք (250. 5)

Եւ եղև... զմտութիւն ընդ պարսիկս և ընդ վանն (188. 4)

... գայր յանասունն (Վ)

... հանդերձ ջահիւք ... (ՎՄԲ)

... արգել զնոսա Տրդատ (ԼԲՍ)

... հիսուն և ութ հազարաւ ... (ՆՄՎ) (եւս-ը շինթոված է սեւս-ի հետ)

... ի հարաւակողմն անասունն (ՎԼԲՍ)

... որ ի զեղջն կային (ՍԲԼՎ)

... քանզեւ զերկերդ քո ... (ՎԼԲՍՎՊ)

... հաուսն ցմայր իւր (ԼԲ)

... և զիւրդ զու գիտ միայն թողեր (ՎՍԼԲ)

... որ խոսանաբարկքն էին եկին ի մանսն (ՎՍԼԲ)

... զեւթ անեքեանն սպանին (ՎԼՍ)

... կաշիքն (ՎԼՍԳ)

... երկուց ոմանց (ՎԳ)

... շնորհն զարսից արքայի (ՎՍ)

... յարանց մերոց (ՍԼԳԲ)

Յիրաւի է անունն իմ (ՎՍԼԲ)

Եւ նորա ձգեալ զաւգն (ՎՍԼ)

... և զորքա քեզ (ՎԼՍԳ)

զքաջ արծիւ (ՎԼՍ)

... կաշիքն ասպար (ՎՍ)

... կաշի ասպար (Լ)

... զասակաց յայլնց ... (ՎՍ)

... ջորեւք (ԳՎՍՎ)

Եւ եղև զմտութիւն ... (ՎՍ) և այլն և այլն

Նմանօրինակ աղճատումների ու սխալների թիվը պարելի է առնվազն հնգապատկել: Դրանք հաճախ դժվարացնում են պատմվածքի ըմբռնումը, սակայն մեծ մասամբ անցնում են աննկատելիորեն...: Ընթացի վրա ավելի բացատրար են անդրադարձել աղավաղված այնպիսի նախադասու- թյունները, որոնց ճշտմամբ ու լրացմամբ միայն հնարավոր է լինում հաս- կանալ բնագրի: Տեղի սղուծյան պատճառով ստիպված ենք նման աղա- վաղումներից ևս բերել միայն սակավաթիվ օրինակներ:

Այսպես, էջ 47.3—5-ում կարդում ենք՝ «Տեսան և սիրելի եղբարց և հայածուխան մշակացի վասն բանին կենաց ի տէր ողջոյն ասեմ, հանդերձ Տրդատաւ և ամենայն իշխանաւքս: Եթէ նույնիակ ուշադրութիւնս չդարձ- նենք շարահյուսական անարթութիւնների վրա («Տեսան և սիրելի եղ- բարց», փխ. «Տեսան սիրեցեալ եղբարցդ»՝ ԱՄՍ), դարձյալ անհնար կլինի որոշել, թե ով է դրության հեղինակը, բնագրի մեջ չմտնելով և: զըչա- պթում սկենաց» բառից հետո պահպանված «Գրիգորիոս արչեպիսկոպոս Հայոց» հատվածը:

52 էջում խոսվում է Լյուսազիմի պատրիարքի մահվան մասին, առանց հիշատակելու նրա անունը: Ըստ և: զըչազրի՝ հատվածը պետք է լրացվի հետևյալ ձևով. «վախճանեցաւ Երուսաղէմի հայրապետն Սիմաթոս: Եւսկ Եղիազար եկեալ ի ճանապարհին հանդիպի սրբոյն Գրիգորի և Տրդատայ- և խնայցեալ յոյժ, դարձաւ զկնի նոցա մինչև ի Հոռոմ քաղաք: Եւ անդ կացեալ բազում աւուրս, ապա խնդրեալ ի նշխարաց սրբոց առաքելոցն մասն ինչ...» (52.12—53.3) հատվածից չի համարձակուած ով է խնդրողը: Թվում է, թե խոսքը պիտի եղիպարին վերաբերի: Լ: զըչազրի համապա- տասխան հատվածում պահպանվել է խնդրողի անունը՝ «խնդրեալ սրբոյն Գրիգորին»:

«Պատմութիւն Տարօնոյ» աշխատութեան Ջենորին վերադրված գլուխ- ների վերաբերյալ բանասիրութեան մեջ հղել են չափազանց կրթոտ ու անխնա քննադատութիւններ: Այդ աշխատութիւնը համարվել է նոր մա- մանակներում ստեղծված ու անհաջող մի կեղծիք: Այս թեզի ապացուցման համար հաճախ հենվել են նախորդ հրատարակութիւնների համար հիմք ծառայած զըչազրերում եղած մի բացարձակ աղավաղված նախադա- սութեան վրա, որի մեջ հեղինակը, իբր իր աշխատութեան կեղծիք լինելը սքողելու նպատակով, հայտնում է, թե՛ «ես յառաջագոյն պրեցի քան զնա [Աղաթանգեղոս]» (63.7—8): Լ: զըչազրի հիման վրա հեշտութեամբ վերա- կանդնվում է սկզբնական բնագիրը հետևյալ ձևով. «Եւ դուք մի ինչ աղաբ- տէք դաւակա պատմութիւնս և կամ թէ Աղաթանգեղոս ընդէ՞ր ոչ է զայսո- սիկ յիշեալ, զի նա յառաջագոյն էր գրեալ»:

Իժմախտարար հրատարակիչն այս գեղարված ևս անխախտ է պահել իր «սկզբունքը»:

«... և զրեցին [ի վերայ արձանին] զայս: Առաջին պատերազմ եղև, որ յոյժ պատերազմոց Արձան քրմապետն...» (94—95) անճանաչելի դարձած նախադասութիւնը պետք է ուղղվի, ըստ և: զըչազրի, հետևյալ ձևով. «Այս առաջին պատերազմ եղև ընդ իրեարս, որ էր յոյժ սաստիկ պատերազմին զխաւոր Արձան քրմապետն...» ևն:

Հրատարակիչը և: զըչազրի «ես եզ [սուրբն 'ըրիգոր] ի ներս, ի տա- պանին գմին ակն պատուական, զոր երբեք ի կեսարիոյ» միանգամայն

պարզ ու հասկանալի նախադասությունից հրաժարվելով՝ գերազանց էլ հանուն իր շարաքաղաղ սկզբունքի, ընդգրկում թողնել էեւ եղ զնոյն տապանն ի նոյն պղծման տապան. և եղ անդ զմին ակն լուսոյ, զոր երբ ի կեսարիայ (100.10—101.1) նախադասությունն Գովարանում ենք ասել՝ վերահիշյալ նախադասությունից արդյոք որեւէ բան հասկացել են հրատարակիչն ու մասնագիտական խմբագիրը:

Ստիպված ենք նույն հարցն առաջադրել նաև «... զի մի կոխելով զպատուական նշխարն, անհաշտ թշնամութիւն լիցի ընդ նա. որ մտածեն և որ ակնարկէն ընդ նա իսկ» (102.7—10) հատվածի առթիվ. որի գիծաց լ. զրչագիրը պահպանել է «... անհաշտ թշնամութիւն լիցի աստուծոյ ընդ նոսա, որք արկանեն և ընդ նա որ մտանէ» ձևը:

«... զի որպէս զայլ տեղեացն չէ ինչ գրեալ. զի թագաւորաց ժամանակադիրք են: Այս պատճէն առաջին պատերազմին Արձանին» (116. 8—10) հատվածը պետք է ուղղել՝ չափազանց, ինչպես այն պահպանված է Ս զրչագրիւմ և վննետիկյան հրատարակութեան մեջ, այսինքն՝ «... զի որպէս զայլ տեղեացն չեմ ինչ գրեալ ի թղթի, նոյնպէս և այլք իմս չիշնեն: Այս պատճէն առաջին՝ Արձանին պատերազմին և որ ինչ գործեցաւ յաւուրս իմս: Եւ ընդամենաց (սուրբն 'որիցոր' վէմս ժողովի, զոր և կոչի Աւետեաց խաչ» (122.3—6) հատվածն անճանաչելի է դարձել. ինչ պատճառով պետք է բարակույտը կոչվեր «Աւետեաց խաչ»: ՍԻ՛, զրչագրերը ժողովելն բառից հետո պահպանել են օրլրածն, և կանգնեաց անդ նշան խաչի» բառերը, որոնք միջոցով փարատվում են բոլոր տարակուսանքները:

Հրատարակութեան համար հիմք ծառայած զրչագրի արտագրողը, հավանաբար չփոթելով նախադասութիւն օրինակի լ. եւ չ. տառերը, ազավաղել է էեւ մտաւեալ [Տրդատ] զերիվարն իւր զկնի Գեղոննոնի այնպիսի փութապէս մինչ զի չետ քայել նմա և ոչ ժ քայլ առաջի իւր» նախադասութեանը, նրա վերջին բառերը փոխելով հետևյալ կերպ՝ «... զի չետ քայլ և (<եւ <քայլել) ոչ ժ քայլ» (135. 10—136.2): Հրատարակիչը, նույնիսկ բացարձակ զրչական սխալի դեպքում, գերազանց է անաղարտ պահել իր սկզբունքը:

Ենկ նիհորճէն Որմիզ գումարեալ զարս Պարսից...» (159.1) նախադասութեան մեջ, թվում է. թե Որմիզ-ը նիհորճէն-ի (պետք է լինի՝ նիսորճէս) կրկնանունն է. այնինչ ԼԻ՛Վ զրչագրերից պարզվում է, որ նիսորճէսը սպանողն է Որմիզի (եւ նիսորճէս. որ զՈրմիզ եսպան...»):

Հողվածի ծավալը չընդարձակելու համար նախընտրում ենք նշման արժանի մյուս օրինակները բերել առանց մեկնարանունների: Ընթերցողի համար դժվար չի լինի բնագրի և այլ զրչագրերի գեմ առ գեմ զրված համապատասխան հատվածներից ֆոկել խոտելին ու աղճատվածը անաղարտից:

ԹՅՈՒՆՈՒՄՆԱՅԻՆ ԿԱՍՏՐՈՒՄ

Այլ զրչագրեր ու նկ

«Միւս պատճառ փան նորս և միւս բըն-նու թեան աղանդոյն Մենանդրի» (52.4—5)

«Վասն ևրկուց պատճառաց. մի՛ մասն նորս. և միւ՛ փան աղանդոյն Մենանդրի»

«... զբաւել զփրս նոցա ի յաշտութիւն» (67.5)

«... զբաւել զփրս նոցա ի յաշտութիւն, այլ սովով և սրով հանել զփրճա եզրաւրն իւրոյ, զոր եսպան արքայն Պարսից» (24ՄՆ)

«... զի այս առն թագաւորին Հայրց է և զուր իշխանք արքային Հայոց» (85.15)

«Իսկ դաւրացն ի մէջ առեալ սպանին արս Զ» (89.2)

«Սու առեալ ածեր զնոսա ի տէրունական սաճարին սեղիսն» (106.2)

«... և ոչ ոք իցէ, որ կարիցէ հանել զդոսա, առ ի գտանել, ուր եղեալ ես (116.2-3)

«... աւեաւորս արձակեցաք ի ստորոտ Արձանին» (122.2)

«... առ եզր գետոյն, որ անցանէր ընդ մէջ գաւառին Կաշտենից» (138.10-139.1)

«Եւ պատարագս... բազում զառանց և ազքասաց բազում ողորմութիւն առնէին» (141.6-8)

«... յաւուր միում առեալ [կինն Վարդպատրկայ իշխանին Արծրունեաց] փոքրիկ մանուկ մի ի սաեան, և էր անդրանիկ և գայր բազում յաւժարութեամբ...» (149.19-11)

«... զառիվայրն, որ ի գլուխ Սաղակայ է» (154.9)

«... առեալ զՄուշեղ ասրաւ նոյն իշխանն Տարաւնոյ ի Դուին» (158.6-7)

«... զայսու սասցեալ յարձակեցան» (159.6)

«... թքակոծեաց զանձաթիւն նորա» (161.11)

«... իշեաց Ոսորով զուխտ իւր և եկ առ աւար և գերութիւն» (161.6-7)

«Սու ինքն առեալ զաւրս իւր Շ¹, երթեալ առ Մուշեղ. Յ այր թողեալ յանցս Մեղաբայ, և երկու հարիւր այր աշտենաւորս ի Սանասայ ի ծմակն թողեալ, և ինքն Մ. այր առեալ գնաց ի Մուշն աւան առ Միհրան» (164.6-185.1)

«... և զուր իշխանք նորա» (ՎՆՍ)

«Իսկ դաւրացն ի մէջ առեալ զքուրմսն սպանին արս Զ» (ՎՆՍ)

«... ի տերունական տաճարն» (ՆՍ)

«... և ոչ ոք կարէ գտանել զդոսա» (ՎՍՆ)

«... առ Տրդատ ի ստորոտ Արձանին» (ՊՆ)

«... առ եզեր գետոյն փոքեր, որ անցանէր ընդ մէջ գաւառին Կաշտենից, որ երթայ ընդ արեելս հիւսիսական» (ՎՆՐՍ)

«Սու պատարագս... բազում զառանց բերեալ մասուցին սասուձոյ...» (ԵՆ)

«... յաւուր միում առեալ զփոքրիկ մանկիկն, զիւր անդրանիկն, որ էր ի սաեան, գայր բազում յաւժարութեամբ...» (ՎՆՐՍ)

«... զառիվայրն, ի հարաւոյ կուսէ վանացն որ ի գլուխ Արղակայ է» (ՎՆՐՍ)

«... առեալ Մուշեղ, զտէրն Մշոյ և Խաթայ իշխանն Տարաւնոյ և Սասնոյ, տարաւ ի Դուին» (ՆՎՍՄՊՆ)

«... զայս սասցեալ, եթէ Կոստան Կարապետ, հաս մեղ յաւգնութիւն, յարձակեցան...» (Ն)

«... թքակոծեցին զնա և զանձաթիւն նորա պարսպեցին» (ՎՆՍԲ)

«... իշեաց Ոսորով զուխտն Մաւրկայ՝ որ ի մէջ նորա և իւր, և եկն անց ի Յոյնս չորեքտասան բիւրաւք, առ աւար և գերութիւն» (ՎՆՐ)

«Եւ ինքն առեալ արս եւթն հարիւր, եկն ի Մուշն աւան, երեք հարիւր այր թողեալ յանցս Մեղտեայ և երկու հարիւր այր աշտենաւորս ի Սանասայ ցեղէն ի Մծմակն թողեալ և ինքն երկու հարիւր այր առեալ ընդ իւր՝ եկն առ Միհրան» (Ն)

¹ Այս նախադասութեան մէջ խիստ կարեոր է հատկապէս Շ-ի ուղղումը «Եւթն հարիւր»-ով, եթէ գումարները Մեղաբայում թողնված զորքերի թիվը (300), Մծմակում թողնվածի (200) և իր հետ վերցրածի (200) հետ, ապա կտանանք 700 և ոչ 500: Անշուշտ

«... և զգզիւն վասն պատճառի ոչ ետ տանելի ի բանա» (103.4-5)

«... և զգզիւն վասն պատճառոյ իրաց արկանելի ետ ի բանա» (ՎՂՍ)

Նման, անգամ ավելի սրտնեղիչ աղճատումներ հետաքրքրվողը կարող է գտնել զրախոսվող բնագրի համարյա բոլոր էջերում (Հմմ. օրինակ՝ 157.4, 159.10, 162.15, 163.1, 179.3, 184.1, 186.4, 188.3, 190.6, 193.4, 200.8, 203.8, 204.2, 206—207, 209.1, 211, 216.1, 221.1, 232.1, 237.6, 243.2, 246.1, 246.6, 249.2, 250.4, 263.3, 265.1, 268.10, և այլն էջերի բնագրերը համապատասխան տարբերակների հետ)։ Մենք հնարավորութուն չունենք և ավելորդ ենք համարում մեջ բերել ուրիշ օրինակներ ևս։ Անցնենք այլ տիպի թերութիւնների քննարկմանը։

Հրատարակիչը բնագրից դուրս է նետել ըզգմաթիվ հետաքրքիր պարբերութիւններ, միայն այն բանի համար, որ նրանք բացակայում են № 1328 գրչապրում, այդ ըզգմաթիւն արդիւք չի հանդիսացել ոչ այն վիստը, որ առանց այդ պարբերութիւնների ընտիրը հաճախ դառնում է անմիտ ու անհասկանալի և ոչ էլ այն, որ մյուս գրչապրերը, համարյա առանց բացառութիւն, պահպանել են այդ պարբերութիւնները։

Նման շատ դեպքերից նշենք միայն մի քանի ակնհայտ օրինակներ։
ա) 105.5 էջում «եւ շարժիւ ծածկեցաւ տեղին» բառերից հետո լՂՍ գրչապրերում պահպանված «իսկ վաղիւն ամեալ... և ոչ գտին» պարբերութիւնը՝ Դեմետրի տաճարում քրմերի թագցրած վանձերը գտնելու նպատակով կատարված ապարդյուն որոնումների, այդ տաճարի հիմքի վրա եկեղեցի կառուցելու և այլ դեպքերի մասին։

բ) 112.5 էջում «... և պարսաւորս Մ և Զ» բառերից հետո, նույն լՂՍ գրչապրերում պահպանված հատվածը («իսկ Պարեխ... զգաւաւն Հաշտնից») Պարեխ, Կետիզը, Բագու գյուղերի երդերի և պատերազմողների թվի մասին, որ, հակառակ հեղինակի խոստման, բացակայում է բնագրից։

գ) 140.3 էջում «իսկ ընդդէմ դարձեալ գաւրապետն Դեղեհնի» բառերից հետո, նույն գրչապրերում պահպանված խիստ հետաքրքիր և ընդարձակ հատվածը՝ հյուսիսային՝ ցեղերի արշավանքի ժամանակ Տրգատ թագավորին ձերբակալելու նպատակով նրանց ձեռք առած միջոցների և անհաջողութիւն մասին։

Կարևոր են նաև 114.7, 117.2, 119.3, 145.7, 145.10, 266.8 էջերից դուրս մնացած հատվածները։

Զինք կարող լուծել միայն անցնել հրատարակված բնագրի գլխախակարգութիւն և գլուխների վերնագրերում եղած թերութիւնների կողքով։

Հովհան Մամիկոնյանը խմբագրելով Տարոնի և Դիակա վանքի պատմութիւն վերաբերյալ իր ունեցած նյութերը, նրանք բաժանել է չորս գլխի՝ Առաջին գլուխ, «... Պատմութիւն Տարաւնոյ, զոր թարգմանեաց Զեւոր Ասորի եպիսկոպոսն»։

Երկրորդ գլուխ, «... Պատմութիւն վասն իննականեան տեղեաց և պատերազմին որ յԱրձանն եղև»։

Յրրայդ գլուխ, «Եթէ ոյք էին որ յաջորդեցին յառաջնորդութիւն սուրբ Կարապետին»։

«Իսկ առաջացել է 1: և Կ տառերի նմանութիւնից, Արքուրագետի առաջնահերթ իրեն-դիւններից մեկն էլ էր կողմից հրատարակվող բնագրեր նման ազավաղումներից մաքրելու է։

Չորրորդ գլուխ. «Գրուի Պարսից Պատմութեան . . .»
Վերոհիշյալ գլուխները բաժանված են եղել ենթագլուխների (գատճեններին):

Առաջին գլխի պատճեններն են՝
ա) «Պատճէն առաջին. [Գիր] սրբոյն Գրիգորի, զոր զրեաց և յղեաց ի Կեսարիայ».

բ) «Պատճէն երկրորդ. Պատասխանի պայմանաւոր գրոյն» սրբոյն Գրիգորի, զոր զրեաց Կեսարու հայրապետն»:

Երկրորդ գլխի պատճեններն են՝
ա) «Պատճէն առաջին». Չենորայ Ասորոյ պատասխանի յղթոյն ասորւոց».

բ) «Պատճէն երկրորդ. Վասն պատերազմին որ յԱրձանն եղեալ»:

Երրորդ գլուխը պատճեններ չունի:
Չորրորդ գլուխը բաղկացած է չորս պատճեններից.

ա) «Պատճէն առաջին. Վասն գալոյն Միհրանայ ի Տարաւն . . .».

բ) «Պատճէն» երկրորդ. Վասն գալոյն Վախթանգայ ի Տարաւն . . .».

գ) «Պատճէն» երրորդ. Վասն գալոյն Տիգրանայ և կոտորածին որ ի Հոնրնկեցն».

դ) «Պատճէն» չորրորդ. Վասն գալոյն Վարդուհեր և մեռանելոյն ի Փանգիկ . . .»:

Չորմբունելով գրախոսվող բնագրի վերոհիշյալ կառուցվածքը և ղեկավարվելով իր շարաբաստիկ սկզբունքով, հրատարակիչը, հասկանալի է, վերնագրերը նույնպէս հրատարակել է թերութիւններով:

Նախ՝ գլուխների ու պատճենների վերնագրերը գիտելով որպէս ամբողջութիւն, հրատարակիչը միևնույն տառաձևերն է գործածել նրանց համար և հաճախ իբրև ձուլել է տարբեր վերնագրեր:

Որպէս օրինակ վերցնենք չորրորդ գլխի վերնագրերը՝ ինչպէս այն հրատարակված է բնագրում.

«Գրուի Պարսից պատմութիւն (*). և և գալն (*) Միհրանայ ի Տարաւն երեսուն հազարով. և և կոտորել (*) Գայլուն Վահանայ զնոսա յԱւստի»:

Վերնագրերն այս ձևով (անգամ եթէ ուշադրութիւն չդարձնենք քերականական արտաբանութիւնները) միանգամայն անհասկանալի է. բարեբախտաբար, մյուս զրչագրերի տված տարբերակների հիման վրա հնարավոր է ճշտել վերնագրերը հետևյալ ձևով՝

ԳԼՈՒԽ ՊԱՐՍԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ (ԱԼԹ) [Պատճէն առաջին. Վասն] գալոյն Միհրանայ ի Տարաւն երեսուն հազարու և կոտորելն Գայլուն Վահանայ զնոսա յԱւստի (ՎԼԱԹ)

Ուղղագրի փակագծերի մեջ առնված բառերը բխում են բնագրից թեկուզ այն պատճառով, որ հաջորդ ենթագլուխը վերնագրված է «Պատճէն» երկրորդ. Վասն գալոյն Վախթանգայ . . .» բառերով (ըստ № 1328 և 1329 զրչագրերի), սակայն, դժբախտաբար, հրատարակիչը, վերոհիշյալ պատճառներով, երկրորդ պատճէնը վերնագրել է «Երկրորդ գալն Վախթանգայ ի Տարաւն . . .» բառերով, որի շնորհիվ, հակառակ բնագրի բովանդակութեան,

1 «Միհրանայ ի Տարաւն» և «Վասն մահուան Տիգրանայ գլուխներն» բնագրերի վերնագրերն են, զանգուրդ են միայն սակավաթիվ զրչագրերում:

ստացվում է այն թյուրիմացությունը, թե Վախթանգը Երկու անգամ է արշավել Տարոնի վրա . . .

Չի կարելի անտես անել նաև չորրորդ գլխի երրորդ պատճենի վերնագրի ազատման վաստը: Հաջորդելով «Վասն գալոյն Մինանայ . . .» և «Վասն գալոյն Վախթանգայ . . .» պատճեններին, այն պետք է կրեր «Երրորդ թվահամարը (ինչպես և ունեն ի ԱՄՊՀ զըջաղերը), սակայն հրատարակիչը, մեղ համար անհայտ պատճառներով, զերազատել է միայն մեկ զըջաղում պահպանված «Երրորդ» սխալ թվահամարը:

Հրատարակության նշելի թերություններից մեկն էլ զեպի հատուկ անունների գրությունը հրատարակչի ցուցարեւած ոչ լուրջ վերաբերմունքն է: Միննույն հատուկ անունը բնագրի տարբեր էջերում բաղմիցս տարբեր գրություններ է մեջ բերված. այսպես, օրինակ, երբեմն զրված է Գրիգոր, երբեմն Գրիգորիս, Ռահան—Լահան, Գիսանեա—Գիսանէ, Մծմայ—Մծմանոտ—Մծմակ—Մծակ, Սուրեն—Աուրեն—Աուրէն, Ուղնուտ. Ողնուտ—Եղնուտ, Սրոց ձոր—Սրենց ձոր—Սրեմաձոր և այլն և այլն. թե որ ձևն է ճիշտ, այդ չի պարզված հրատարակչի կողմից:

Հատուկ անունների սխալ և իրար հակասող ձևերի առկայությունը բնագրում, ավելի լուրջ թերություն է, քան սովորական բառերի ու արտահայտությունների, արդեն մեզ ծանոթ՝ սխալ և աղտվաղված ձևերի առկայությունը:

Չենք կարող չնշել նաև անձնանունների և տեղանունների աղավաղումներից մի քանիսը:

Գըջաղերից մեծ մասի տված «Մամիկոններից» («Մամիկոնեան») միանգամայն ճիշտ ձևի փոխարեն բնագրում շտուգանակ օգտագործված է «Մամիկոնից» ձևը. տպագրված է «Գարիեն» (68.7), փոխանակ «Գարտուն» Ուզուհի, փխ Ողուհի (70.4), Յեփթաղիեկեայ, փխ Նեփթաղեկեայ, (71.11), Անկիւղ կամ Անկեղ (77.7, 81.2, 82.8 ևն), փխ Անգեղ (ինչպես կա 136.10.), Գոնեաղաշաի, փխ Գունայ դաշտին (78.7), արք Մեղտոյ, փխ Մեղտեայ (87.8), Բառեն, փխ Բասեան (89.3), Գիսիանէ, փխ Գիսանէ (95.3), Հոռա, փխ Հոռենայ (<Հոռեան) 108.10, Կիւրիւղ, փխ Կիւրեղ (157.1), Մուրիկ, փխ Մաւրիկ (158.3), Բալխաստան, փխ Բանդ Շահաստան (158.10), Նիհորճէն, փխ Նիհորճէս (159.1), ծմակն, փխ Մծմակն (186.2), Ի Մուրատն, փխ Ի Մաւր անդր (188.10), Արածնի, փխ Արածանի (200.6), Բուստր, փխ Բոստր (201.10), աւելոյ Ատինչ, փխ Աւելոյատինչ¹ (213.6), Շերանիկք, փխ Շիրենիք² (247.15), գիւղն Պալունեաց, փխ գաւառն . . . (259.3) և այլն և այլն:

Բնագրում կան նաև ոչ քիչ քանակությամբ տառասխալներ, որոնց մի մասն, անշուշտ, պիտի անուշաղիր սրբագրության արդյունք համարել. որպես օրինակ նշենք զրանցից մի քանիսը՝ մեջ (139.1), և, փխ և (141.3), ողջակիղած (141.6), ընդդեմ (140.3), մտանեն, ակնարկեն (102.9), տերունական (106.3) և այլն և այլն:

Բնագրի վրա բացասաբար է ազդում նաև թվականների տառանջնեքով արտահայտված լիճակը: Չափազանց դժվար կլինի շարքային ընթերցողի համար կարգալ, սենք՝ և . . . Կուառու ունի երգահամարս ԻՌ և Բժան (Երեք հազար և երկուսասան) և հեծեալս ԻԼ (հազար երեսուն) և հետևակս

¹ «Ատինչ» նշանակում է բնակատեղի, ամրություն (հմ. Բագաթնջ ևն):
² Կազմված է շէր (երգ) բառից:

ԲՈՒ և Մ (երկու հազար և երկու հարիւր) նախադասութիւններ, որի թվական արժեքները բառերով արտահայտելու դեպքում (ինչպես մենք արել ենք փակագծերի մեջ) նախադասութեան ընթերցումը կհնչեանար:

Միայն մի գրչագրով մեզ հասած ընդգրկելի հրատարակման ժամանակ, ընդգրկուող գրական ընդհանուր ձևերը, անգամ բացարձակ տառասխալները, անհրաժեշտ է նույնութեամբ արտահայտել սպառնալից ընդգրկում, սակայն համեմատական ընդգրկում, ինչպիսին է գրախոսութեան նյութը գրած ընդգրկումը, անբացատրելի է նման ուղղագրական ձևերի գոյութիւնը՝ տեղոյ, փոխ տեղոյ, եկեղեցոյ, ֆիլի կեղեցոյ և այլն, նամանականոց երբ նույն բաների դիմաց գրչագրերի մեծ մասը պահպանել են ընդհանուրին ճիշտ ձևերը: Անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք սակ նաև տարբերակների բաժնում: նկատուող թերութիւնները մասին:

Կան բազմաթիւ բառաձևեր, որ տարբերակների բաժինն են մտել, բայց նույնն են, ինչ որ ընդգրկի համապատասխան բառերը. այսպես՝ 42.1 էջի տարբերակների բաժնում նշված է, որպես ԱՄՄ գրչագրերի տարբերակները, «վիճակի» ձևը, ընդգրկում էլ սպված է «վիճակի», 151.11 էջում, որպես ԲԼ գրչագրերի տարբերակները, նույնպես ընդգրկելի համապատասխան թայգլափ աշխատանք քո» ձևը (հմտ. նաև 84.11, 84.12, 89.4, 91.4, 149.11 և այլն): Տարակուսում է ընթերցողը՝ տարբերակները հրատարակված են վրիպակներով, թե՛ ուղղակի թյուրմասցութեամբ են այդ բառաձևերը մուտք գործել հրատարակութեան մեջ:

Կան տարբերակներ, որոնց ընդգրկի որ բառին համապատասխան են անհնար է լինում պարզի. այսպես, օրինակ՝ 140 էջի տարբերակների բաժնի 2-րդ տողում, որպես ՍԼԼ գրչագրերի ընթերցվածք, բերված է «ղձեռանէ նորա» արտահայտութիւնը, բայց թե 2-րդ տողի որ բառերին է փոխարինում այն հիշյալ գրչագրերում՝ մտում է անբացատրելի: Կարողում ենք նաև նախորդ և հետնորդ տողերը, հույս ունենալով, որ, ինչպես բազմաթիւ այլ դեպքերում, տողանիշը սխալ է բերված, սակայն արդյունքի չենք հասնում այս դեպքում ևս:

Միևնույն խմբագրութեան պատկանող գրչագրերի տված տարբերակներից առաջ բերվող տառանիշերը, որոնք պայմանականորեն արտահայտում են մեր Մատենադարանի՝ համեմատութեան ժամանակ օգտագործած գրչագրերի համարները, նշվում են առանց որևէ կանխորոշված հերթականութեան, մերթ սպառված է ԼԲ, մերթ՝ ԲԼ, կամ՝ ԼԼՄԲ, ՄԲԼԼ, ԲԿՍԼ և հիշյալ տառանիշերի հնարավոր բոլոր դասավորութիւններով, իսկ այս հանգամանքը դժվարացնում է ցանկացած գրչագրի և կամ տարբեր խմբագրութիւնների պատկանող գրչագրերի տարբերակները հետազոտելու և իրարից զատելու գործը:

Եզրակացութիւնը պարզ է: Մատենադարանի գիրկցիայի գովելի նախածեղնութիւնը վերջացել է անհաջող: Հայ պատմագրերի, ինչպես և գիտական ընդգրկելի հրատարակման խիստ պատասխանատու և կարևոր գործին պետք է լծվին մեր փորձառու և լավապույն մասնագետները:

Լ. ԽԱՉԻԿՅԱՆ